- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/393350752180828>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/393322428850327>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/393126082203295>
- [https://www.facebook.com/watch/live/?ref=watch\\_permalink&v=839625340250443](https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=839625340250443)
- [https://www.facebook.com/watch/live/?ref=watch\\_permalink&v=628906428089290](https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=628906428089290)
- <https://www.facebook.com/watch/?v=362011762244694>
- [https://www.facebook.com/watch/live/?ref=watch\\_permalink&v=383702716490937](https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=383702716490937)
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392109742304929>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392091285640108>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392090872306816>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392090642306839>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392090398973530>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392090118973558>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392089612306942>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/392089195640317>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/391757009006869>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/391757009006869>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/391650585684178>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/391270599055510>

## Հոկտեմբեր, 2021

Հրատարակումներ ԶԼՄ-ներում.

Պատրաստվել է մամուլի 2 հաղորդագրություն, որոնց տեղադրումներն էին.

- <https://www.azatutyun.am/a/31525806.html>
- <https://m.shamshyan.com/hy/article/2021/10/29/1199386/>
- <https://armenpress.am/arm/news/1066865/>

Հրատարակումներ կայքում և FB-ում.

Պատրաստվել է 22 տեղեկատվական նյութ, այդ թվում՝ մամուլի հաղորդագրություն, վարպետության դասերի և համերգների (M4FCMA, համերգներ՝ հոկտեմբերի 27, 28, 29) մասին տեղեկություններ, որոնք տեղադրվել են հիմնադրամի կայքում:

- <https://www.m4f.foundation/hy/news/58>
- <https://www.m4f.foundation/hy/news/59>
- <https://www.m4f.foundation/hy/news/60>
- <https://www.m4f.foundation/hy/news/61>
- <https://www.m4f.foundation/hy/news/62>
- <https://www.m4f.foundation/hy/news/63>
- <https://www.m4f.foundation/hy/news/64>
- <https://www.m4f.foundation/hy/news/65>

- <https://www.m4f.foundation/hy/news/66>
- <https://www.m4f.foundation/hy/news/67>
- <https://www.m4f.foundation/hy/news/68>
- <https://www.m4f.foundation/hy/news/69>
- <https://www.m4f.foundation/hy/news/70>
- <https://www.m4f.foundation/hy/news/72>
- <https://www.m4f.foundation/hy/news/73>
- <https://www.m4f.foundation/hy/news/74>
- <https://www.m4f.foundation/hy/news/75>
- <https://www.m4f.foundation/hy/news/76>
- <https://www.m4f.foundation/hy/news/77>
- <https://www.m4f.foundation/hy/news/78>
- <https://www.m4f.foundation/hy/news/79>
- <https://www.m4f.foundation/hy/news/80>

Հիմնադրամի ֆեյսբուքյան էջում տեղադրվել է կրթաթաշակառուների համերգների մասին 3 միջոցառում (event): Կրթաթաշակառուների համար Երևանում անցկացված M4FCMA ակադեմիայի շրջանակներում վարպետության դասերի, համերգների մամուլի հրապարակումների, ծննդյան օրերի մասին ֆեյսբուքյան էջում կատարվել են հրապարակումներ.

- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/430386025143967>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/429340965248473>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/429183401930896>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/429009635281606>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/428007418715161>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/427484442100792>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/427200005462569>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/427140318801871>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/426692972179939>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/426185022230734>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/426184758897427>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/425199642329272>
- <https://www.facebook.com/events/891261951764055/>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/424583999057503>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/424211072428129>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/423490795833490>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/423192485863321>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/423182855864284>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/422848015897768>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/422793755903194>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/422649742584262>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/422235392625697>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/422101935972376>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/421554129360490>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/420982942750942>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/420844572764779>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/419389386243631>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/419374839578419>

- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/419240626258507>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/419110759604827>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/418322129683690>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/417949006387669>
- <https://www.facebook.com/watch/?v=200068002231707>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/417213649794538>
- <https://www.facebook.com/watch/?v=1092424501564568>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/416294809886422>
- <https://www.facebook.com/watch/?v=169923841966871>
- <https://www.facebook.com/watch/?v=1314345579023074>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/414039853445251>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/414025373446699>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/413590653490171>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/411068677075702>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/410523757130194>
- <https://www.facebook.com/M4FFoundation/posts/410497720466131>

**Հավելված 1**

**Երևանում կազմակերպված վարպետության դասեր՝  
ժամանակագրական հաջորդականությամբ  
(01.07.2020-31.10.2021, Երևան)**

Աղյուսակ 1. Երևանում կազմակերպված վարպետության դասեր 2020/2021թթ.-ի կրթաթոշակառուների համար (01.07.2020-31.10.2021)

<b>N</b>	<b>Ամսաթիվ</b>	<b>Կրթաթոշակառու 2020/2021</b>	<b>Գործիք</b>	<b>Պրոֆեսոր</b>	<b>Դասերի քանակ (հատ)</b>
<b>2020թ.</b>					
1	23.09.2020	Ասյա Անիսիմովա	ջուլթակ	Ստելլա Չեն (ԱՄՆ)	1
2	24.09.2020	Դավիթ Բոյաջյան	ջուլթակ	Չիա Հյունսու Շին (Հարավային Կորեա)	1
3	25.09.2020	Գուր Սարգսյան	դաշնամուր	Ֆրեդի Բենիֆ (Մեծ Բրիտանիա)	1
<b>2021թ.</b>					
4	27.01.2021	Մարի Հակոբյան	թավջութակ	Դմիտրի Յարյոնսկի (ԱՄՆ/Իսրայել/ Իսպանիա)	1
5	31.03.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Վահագն Պապյան (Իսրայել)	1
<b>«Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիա</b>					
6	02.10.2021	Ասյա Անիսիմովա	ջուլթակ	Սերգեյ Դոգադին (Ռուսաստան)	1
7	02.10.2021	Դավիթ Բոյաջյան	ջուլթակ	Սերգեյ Դոգադին (Ռուսաստան)	1
8	11.10.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Ջին Յան (Չինաստան)	1
9	13.10.2021	Դավիթ Տոնոյան	ֆագոտ	Նիկոլայ Պոդոյան (Հայաստան)	1
10	19.10.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Վլադիմիր Օվչիննիկով (Ռուսաստան)	1
11	20.10.2021	Մարի Հակոբյան	թավջութակ	Ֆելիքս Կորոբով (Ռուսաստան)	1
12	21.10.2021	Ասյա Անիսիմովա	ջուլթակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1
13	21.10.2021	Դավիթ Բոյաջյան	ջուլթակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1
14	23.10.2021	Սարենիկ Գալստյան	գալարափող	Արմեն Կարազյան (Հայաստան)	1
15	23.10.2021	Ասյա Անիսիմովա	ջուլթակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	1
16	23.10.2021	Դավիթ Բոյաջյան	ջուլթակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	1
17	25.10.2021	Միհրան Առաքելյան	շեփոր	Տիգրան Ավագյան (Հայաստան)	1

18	25.10.2021	Սամվել Դավթյան	տրոմբոն	Վահրամ Դավթյան (Հայաստան)	1
19	26.10.2021	Մարի Հակոբյան	թավջութակ	Սթիվեն Իսսերլիս (Մեծ Բրիտանիա)	1

Աղյուսակ 2. Երևանում «Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիայի շրջանակներում կազմակերպված վարպետության դասեր 2021/2022թ-ի կրթաթոշակատուների համար (01.10.2021-31.10.2021)

N	Ամսաթիվ	Կրթաթոշակատու 2021/2022	Գործիք	Պրոֆեսոր	Դասերի քանակ (հատ)
<b>2021թ. «Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիա</b>					
1	08.10.2021	Էդուարդ Գևորգյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
2	08.10.2021	Աիդա Ավանեսյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
3	08.10.2021	Սվետլանա Հակոբյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
4	08.10.2021	Ալինա Ադամյան	ջութակ	Լավարդ Սկոու Լարսեն (Բրազիլիա/Գերմանիա/ Ավստրիա)	1
5	08.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Լավարդ Սկոու Լարսեն (Բրազիլիա/Գերմանիա/ Ավստրիա)	1
6	08.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Լավարդ Սկոու Լարսեն (Բրազիլիա/Գերմանիա/ Ավստրիա)	1
7	08.10.2021	Անի Մելիքյան	ջութակ	Լավարդ Սկոու Լարսեն (Բրազիլիա/Գերմանիա/ Ավստրիա)	1
8	09.10.2021	Էդուարդ Չավոշյանց	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/ Ավստրիա)	1
9	11.10.2021	Էդուարդ Գևորգյան	դաշնամուր	Ջին Յան (Չինաստան)	1
10	12.10.2021	Ալինա Ադամյան	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1
11	12.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1
12	12.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1
13	12.10.2021	Անի Մելիքյան	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1

14	13.10.2021	Վիկտորյա Պետրոսյան	Ֆլեյտա	Մաքսիմ Ռուբցով (Ռուսաստան)	2
15	15.10.2021	Նարեկ Հեքեքյան	թավջութակ	Դմիտրի Յարլոնսկի (ԱՄՆ/Իսրայել/ Իսպանիա)	1
16	15.10.2021	Ալեքս Գրիգորյան	թավջութակ	Դմիտրի Յարլոնսկի (ԱՄՆ/Իսրայել/ Իսպանիա)	1
17	15.10.2021	Ալինա Ադամյան	ջութակ	Ժանա Գանդելման (Իսրայել)	1
18	15.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Ժանա Գանդելման (Իսրայել)	1
19	15.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Ժանա Գանդելման (Իսրայել)	1
20	18.10.2021	Ալինա Ադամյան	ջութակ	Ֆումիակի Միուրա (Ճապոնիա)	1
21	18.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Ֆումիակի Միուրա (Ճապոնիա)	1
22	18.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Ֆումիակի Միուրա (Ճապոնիա)	1
23	18.10.2021	Անի Մելիքյան	ջութակ	Ֆումիակի Միուրա (Ճապոնիա)	1
24	18.10.2021	Աիդա Ավանեսյան	դաշնամուր	Ժան-Պոլ Գասպարյան (Ֆրանսիա)	1
25	18.10.2021	Սվետլանա Հակոբյան	դաշնամուր	Ժան-Պոլ Գասպարյան (Ֆրանսիա)	1
26	19.10.2021	Սվետլանա Հակոբյան	դաշնամուր	Վլադիմիր Օվչիննիկով (Ռուսաստան)	1
27	19.10.2021	Էդուարդ Գևորգյան	դաշնամուր	Վլադիմիր Օվչիննիկով (Ռուսաստան)	1
28	19.10.2021	Էդուարդ Չավոշյանց	դաշնամուր	Վլադիմիր Օվչիննիկով (Ռուսաստան)	1
29	20.10.2021	Աիդա Ավանեսյան	դաշնամուր	Ռեմի Ժենյե (Ֆրանսիա)	1
30	20.10.2021	Նարեկ Հեքեքյան	թավջութակ	Ֆելիքս Կորոբով (Ռուսաստան)	1
31	20.10.2021	Ալեքս Գրիգորյան	թավջութակ	Ֆելիքս Կորոբով (Ռուսաստան)	1
32	20.10.2021	Լյանա Ուլիխանյան	թավջութակ	Ֆելիքս Կորոբով (Ռուսաստան)	1
33	21.10.2021	Ալինա Ադամյան	ջութակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1
34	21.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1

35	21.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1
36	21.10.2021	Անի Մելիքյան	ջութակ	Գիլ Շահամ (ԱՄՆ)	1
37	22 և 25.10.2021	Ալինա Աղամյան	ջութակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	2
38	22 և 25.10.2021	Օվսաննա Հարությունյան	ջութակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	2
39	22 և 25.10.2021	Անի Մելիքյան	ջութակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	2
40	23 և 25.10.2021	Հայկ Մարտիրոսյան	ջութակ	Դորա Շվարցբերգ (Ավստրիա)	2
41	26.10.2021	Նարեկ Հեքեքյան	թավջութակ	Սթիվեն Իսսերլիս (Մեծ Բրիտանիա)	1

Աղյուսակ 3. Երևանում կազմակերպված վարպետության դասեր ոչ կրթաթոշակառուների համար (01.07.2020-31.10.2021)

N	Ամսաթիվ	Ոչ կրթաթոշակառու մասնակից	Գործիք	Պրոֆեսոր	Դասերի քանակ (հատ)
<b>2020թ.</b>					
1	25.09.2020	Ալեքս Գևորգյան	դաշնամուր	Դենիս Կոժուխին (Ռուսաստան)	1
<b>2021թ. «Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիա</b>					
2	08.10.2021	Աստղիկ Դուկասյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
3	09.10.2021	Վալերի Պոլոյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
4	09.10.2021	Արիանա Կարապետյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
5	09.10.2021	Մարգարիտա Միքաելյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
6	11.10.2021	Գառնիկ Մսրյան	դաշնամուր	Ջին Յան (Չինաստան)	1
7	11.10.2021	Մարի Փոշոտյան	դաշնամուր	Ջին Յան (Չինաստան)	1

## Հավելված 2

### Արտերկրում կազմակերպված վարպետության դասեր՝ ժամանակագրական հաջորդականությամբ

(03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

Աղյուսակ 4. MECMA-ի շրջանակներում 2020/2021թ-ի կրթաթոշակառուների համար կազմակերպված վարպետության դասեր՝ ըստ ժամանակագրական հաջորդականության  
(03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

N	Ամսաթիվ	Կրթաթոշակառու	Գործիք	Պրոֆեսոր	Դասերի քանակ (հատ)
1	04.09.2021	Միհրան Առաքելյան	շեփոր	Վլադիսլավ Լավրիկ (Ռուսաստան)	2
2	04.09.2021	Դավիթ Տոնոյան	ֆագոտ	Անդրեյ Շամիրանով (Ռուսաստան)	2
3	06.09.2021	Ասյա Անիսիմովա	ջութակ	Հայկ Կազազյան (Ռուսաստան/ Հայաստան)	2
4	06.09.2021	Դավիթ Բոյաջյան	ջութակ	Բորիս Կուշնիր (Ավստրիա)	1
5	06.09.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
6	07.09.2021	Ասյա Անիսիմովա	ջութակ	Դանիել Հոփ (Մեծ Բրիտանիա)	1
7	08.09.2021	Ասյա Անիսիմովա	ջութակ	Սերգեյ Դոգադին (Ռուսաստան)	1
8	08.09.2021	Դավիթ Բոյաջյան	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	2
9	08.09.2021	Հայկ Հեքեքյան	հորոյ	Պավել Օռլով (Ռուսաստան)	2
10	09.09.2021	Տիգրան Գասպարյան	հորոյ	Պավել Օռլով (Ռուսաստան)	2
11	09.09.2021	Սամվել Դավթյան	տրոմբոն	Վասիլի Կոզլով (Ռուսաստան)	2
12	10.09.2021	Հայկ Հեքեքյան	հորոյ	Լիոր Միշել (ԱՄՆ)	2
13	11.09.2021	Տիգրան Գասպարյան	հորոյ	Լիոր Միշել (ԱՄՆ)	2
14	11.09.2021	Դավիթ Տոնոյան	ֆագոտ	Ռիչարդ Փալեյ (Իսրայել)	2
15	11 և 18.09.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	3
16	12.09.2021	Ասյա Անիսիմովա	ջութակ	Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1



17	12.09.2021	Մարի Հակոբյան	թավջութակ	Դմիտրի Յարբոնսկի (ԱՄՆ/Իսրայել/ Իսպանիա)	2
18	12.09.2021	Միհրան Առաքելյան	շեփոր	Անդրեյ Չոունյուկ (Ռուսաստան)	2
19	12.09.2021	Սաթենիկ Գալստյան	գալարափող	Հազայի Շալոմ (Իսրայել)	2
20	13.09.2021	Սաթենիկ Գալստյան	գալարափող	Վադիմ Շվեդչիկով (Ռուսաստան)	2
21	18.09.2021	Սամվել Դավթյան	տրոմբոն	Նաթանել Բիկով (Իսրայել)	2
22	20.09.2021	Մարի Հակոբյան	թավջութակ	Ալեքսանդր Ռամմ (Ռուսաստան)	2
23	23.09.2021	Դավիթ Բոյաջյան	ջութակ	Իգոր Պետրուշևսկի (Մեծ Բրիտանիա)	1
24	23.09.2021	Գուր Սարգսյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	1

Աղյուսակ 5. MECMA-ի շրջանակներում ոչ կրթաթոշակառու-դաշնակահար պատանիների համար կազմակերպված վարպետության դասեր՝ ըստ ժամանակագրական հաջորդականության (03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

<b>N</b>	<b>Ամսաթիվ</b>	<b>Մասնակից</b>	<b>Գործիք</b>	<b>Պրոֆեսոր</b>	<b>Դասերի քանակ (հատ)</b>
1	06.09.2021	Գառնիկ Մսրյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
2	06.09.2021	Մարի Փոշոտյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/Ավստրիա)	1
3	09 և 18.09.2021	Արիանա Կարապետյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	3
4	10 և 12.09.2021	Մարի Փոշոտյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	3
5	10 և 18.09.2021	Մարգարիտա Միքաելյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	3
6	11 և 18.09.2021	Գառնիկ Մսրյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	2
7	13.09.2021	Աստղիկ Ղուկասյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	2
8	20.09.2021	Արիանա Կարապետյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	2
9	20 և 23.09.2021	Վալերի Պոլոյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	4

10	21.09.2021	Մարգարիտա Միքսելյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	2
11	22.09.2021	Գառնիկ Մարյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	2
12	22.09.2021	Աստղիկ Ղուկասյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	2

### Հավելված 3

**Մասնակիցների տպավորությունները  
արտերկրում կազմակերպված MECMA Ակադեմիայից և InClassica  
միջազգային երաժշտական փառատոնից  
(03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)**

Աղյուսակ 6. Մասնակիցների տպավորություններ MECMA Ակադեմիայից և InClassica միջազգային երաժշտական փառատոնից (03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

N	Կրթաթոշակառու	Տպավորություն
1	Այա Անիսիմովա	<p>Իմ տպավորություններն իսկապես անկարագրելի են, քանի որ 22 օրում ունկնդրեցինք գրեթե 44 հոյակապ համերգներ, մասնակցեցինք ավելի քան 48 վարպետության դասերի՝ լավագույն դասախոսների, փորձառու երաժիշտների ու մասնագետների մոտ, ելույթներ ունեցանք և վայելեցինք հեղինակավոր նվագախմբերի և աշխարհահռչակ մենակատարների ելույթները, որը կարծում եմ ցանկացած երաժշտի համար մեծ փորձ և շատ մեծ հնարավորություն է:</p> <p>Ներկա գտնվելով աշխարհահռչակ մասնագետների, այդ թվում՝ Սերգեյ Խաչատրյանի, Հայկ Կազազյանի, Մաքսիմ Վենգերովի, Սերգեյ Դոգադինի, Գրաֆ Մուրժայի, Գիլ Շահամի, Դանիել Հոփի և այլոց ելույթներին՝ ես կարողացա վերցնել շատ գիտելիքներ, նոր ու հետաքրքիր գաղափարներ և օգտակար խորհուրդներ, որոնք ես անշուշտ կօգտագործեմ իմ հետագա բոլոր ստեղծագործություններում:</p> <p>Շատ տպավորիչ էին ցերեկային համերգները, որտեղ նվագեցի նաև ես՝ կրթաթոշակառու Դավիթ Բոյաջյանի հետ: Կատարեցինք Բախի 2 ջութակի կոնցերտը, որը պատրաստել էինք կարճ ժամանակահատվածում: Եվ չնայած նրան, որ հուզմունքը շատ մեծ էր, միևնույն է համագործակցությունը նվագախմբի և դիրիժորի հետ կարծում եմ շատ լավ ստացվեց:</p> <p>Անչափ շնորհակալ եմ Սերգեյ Սմբատյանին, Աննա Տեր-Հովակիմյանին և բոլոր կազմակերպիչներին և ղեկավարներին՝ մեզ հնարավորություն ընձեռնելու Inclassica միջազգային փառատոնի շրջանակում կազմակերպված Մերձավոր Արևելքի դասական երաժշտության ակադեմիային մասնակից լինելու և 22 օր հիանալի ընկերական միջավայրում անցկացնելու համար:</p>

2	Դավիթ Բոյաջյան	<p>Մեր անմոռանալի այցը Դուբայ շատ հետաքրքիր անցավ, այնտեղ մենք ունեցել ենք վարպետության դասեր և համերգների հաճախում, մասնակցում: Մեծ շնորհակալություն եմ հայտնում MECMA-ի և InClassica փառատոնի կազմակերպիչներին, քանի որ ես վարպետության դասեր ունեցա Իզոր Պետրուշևսկու, Գրաֆ Մուրժայի, Բորիս Կուշնիրի հետ, ովքեր ինձ շատ կարևոր խորհուրդներ տվեցին նվագիս առումով (նվագի արտահայտչականություն, տեխնիկայի զարգացում, ինչպես է պետք ճիշտ պարապել տանը և այլն):</p> <p>Նաև ներկա եմ եղել վարպետության բաց դասերի, որոնք անց էին կացնում Սերգեյ Խաչատրյանը և Ստեփան Չենը: Ամեն օր հաճախում էինք համերգների, որտեղ լսում էինք աշխարհահռչակ երաժիշտների, որոնցից շատ հավանեցի ջութակահարներ Մաքսիմ Վենգերովի, Սերգեյ Խաչատրյանի, Սերգեյ Դոգադինի, Գիլ Շահամի կատարումները:</p> <p>Նաև անմոռանալի էին LunchTime ցերեկային համերգները, որտեղ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և կրթաթոշակառու Ասյա Անիսիմովայի հետ միասին կատարեցինք Բախ - «Կոնցերտ 2 ջութակի համար, ռե մինոր» ստեղծագործությունը: Վստահ էի, որ մեր այդքան աշխատելուց հետո լավ ենք կատարելու, և այդպես էլ ստացվեց: Սա իմ առաջին կատարումն էր նվագախմբի հետ որպես մենակատար, և դա շատ մեծ ու անմոռանալի հաճույք էր ինձ համար:</p> <p>Շատ շնորհակալ եմ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամից, որ այս 22 օրը դարձրեցին իմ ամենահետաքրքիր և ամենահիշվող օրերից:</p>
3	Մարի Հակոբյան	<p>Ես Դուբայից վերադարձել եմ շատ վառ տպավորություններով: 22 օրերի ընթացքում շատ բան սովորեցի և բացահայտեցի: Մեծ հաճույքով լսում էի համերգները, մասնակցում վարպետության դասերին: Ինձ համար մեծ պատիվ էր հանդիպել աշխարհահռչակ երաժիշտների հետ, լսել նրանց կատարումները: Ինձ բացառիկ ու անկրկնելի հնարավորություն էր տրված խորհուրդներ լսել այնպիսի հայտնի երաժիշտների կողմից, ինչպիսիք են Դմիտրի Յարլունսկին և Ալեքսանդր Ռամմը:</p> <p>Նաև անչափ ոգևորված էի նվագախմբի հետ նվագելու հնարավորության համար: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ նվագելը իմ երազանքն էր: Իհարկե չափազանց հուզված էի, որովհետև պատասխանատու գործ էր կատարել Հայդնի ռե մաժոր կոնցերտը օտար երկրում առաջին անգամ նվագախմբի հետ: Շնորհակալ եմ նվագախմբի երաժիշտներին, որոնք ոգևորում էին և թույլ չէին տալիս նեղվել:</p> <p>Անչափ շնորհակալ եմ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամին այս միջոցառման համար: Շնորհակալ եմ տիկին Աննային ու Լիդային մեզ անմոռանալի օրեր պարզևելու համար: Նաև շնորհակալ եմ մեր խմբի բոլոր երեխաներին այդքան լավը լինելու համար:</p>

4	Հայկ Հեքեքյան	<p>Դուբայում Մերձավոր Արևելքի դասական երաժշտության ակադեմիային և InClassica փառատոնին մասնակցությունն ինձ համար մեծ պատիվ էր և փորձառություն: Ծնորհակալ եմ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամին՝ ինձ տրված այդ հնարավորության համար:</p> <p>Անմոռանալի պահեր ապրեցինք. վարպետաց դասեր, որ կարևոր գիտելիքներ էին փոխանցում, համերգներ՝ աշխարհահռչակ արտիստների մասնակցությամբ, նոր տպավորություններ, նոր ընկերներ: Իսկ գագաթնակետն անձամբ ինձ համար ելույթն էր Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ (գլխ. դիրիժոր և գեղ. ղեկավար՝ Սերգեյ Սմբատյան, համերգը ղեկավարում էր Ֆելիքս Կորոբովը): Կյանքիս ընթացքում սա թվով երրորդ ելույթն էր նվագախմբի հետ: Երաժշտական բազմաթիվ գործիքների հետ նույն բեմում միասին երաժշտություն կերտելու հաճույքն անպատմելի է:</p> <p>Արաբական Էմիրություններում մեր անցկացրած օրերը ոչ միայն դասընթաց էին ընկերներիս ու ինձ համար, ելույթի, դրսևորվելու հնարավորություն, այլև ուղղակի հիանալի հիշողություն, որ միշտ մնալու են մեզ հետ:</p>
5	Տիգրան Գասպարյան	<p>Այս 22 օրերը գտնվելով Դուբայում ինձ համար դարձան անմոռանալի: Մենք ունկնդրեցինք հոյակապ համերգներ, ունեցանք վարպետության դասեր, հնարավորություն ունեցանք ելույթ ունենալ: Ծատ դուր եկան վարպետության դասերը, որոնք անցկացրեցին Լիոր Միշելը ու Պավել Օռլովը: Նրանք տվեցին զանազան խորհուրդներ, որոնք ես այժմ օգտագործում եմ նվագելու ժամանակ:</p> <p>Ծնորհակալություն Աննա Տեր-Հովակիմյանին ու Սերգեյ Սմբատյանին և բոլոր նրանց, ում օգնությամբ այս 22 օրերը դարձան անմոռանալի հիշողություն:</p>
6	Միհրան Առաքելյան	<p>Տպավորություններս շատ մեծ ու անբացատրելի են, քանի որ ներկա գտնվելով բազում համերգների, մի շարք վարպետության դասերի լավագույն երաժիշտների ու դասախոսների մոտ, ունկնդրելով հիասքանչ համերգներ՝ մենք իսկապես շատ մեծ ու դրական լիցքեր ստացանք, շատ գիտելիքներ, որոնք ինձ համար անչափ կարևոր են:</p> <p>Մեզ համար շատ մեծ հնարավորություն էր մասնակից լինելու InClassica փառատոնին և MECMA-ի անցկացվող բոլոր դասերին: Վարպետության դասեր ունեցա Վլադիսլավ Լավրիկի և Անդրեյ Չոլունյուկի հետ, որոնցից ստացա նոր գաղափարներ երաժշտությունն ավելի ճիշտ կատարելու համար: Իսկ համերգին կատարեցի Վարիսցիաներ-Բելլինիի Նորմա օպերայից:</p> <p>Ծնորհակալ եմ բոլոր կազմակերպիչներին ու ղեկավարներին, հանձինս՝ Սերգեյ Սմբատյանի, Աննա Տեր-Հովակիմյանի, նման ծրագիր ստեղծելու և մեզ այս հիասքանչ ծրագրի մեջ ներգրավելու համար:</p>
7	Գուր Սարգսյան	<p>Ինձ համար շատ օգտակար էին վարպետության դասերը պրոֆեսորներ Պավել Գիլիովի, Ջուլիանո Մացոկանտեի և Ստեփան Սիմոնյանի հետ: Մեծ պատիվ էր նվագել Ռախմանինովի 2 կոնցերտի առաջին մասը Հայաստանի պետական Սիմֆոնիկ նվագախմբի և ռուս հայտնի դիրիժոր՝ Ֆելիքս Կորոբովի հետ: Բոլորիս համար անակնկալ էր նաև այն, որ համերգաշարն ու վարպետության դասերը շարունակվեցին Հայաստանում:</p>

	Յանկանում են իմ խորին շնորհակալությունը հայտնել մասնատրո Սերգեյ Սմբատյանին և տիկին Աննա Տեր-Հովակիմյանին իրենց անխոնջ աշխատանքի և անմնացորդ նվիրումի համար:
--	---

**Մասնակիցների տպավորությունները  
Երևանում կազմակերպված M4FCMA Ակադեմիայից և «Արմենիա»  
միջազգային երաժշտական փառատոնից  
(01.10.2021-31.10.2021, Երևան)**

Աղյուսակ 7. Մասնակիցների տպավորություններ M4FCMA Ակադեմիայից և «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոնից (01.10.2021-31.10.2021)

1	Վիկտորյա Պետրոսյան	<p>Ս. թ. հոկտեմբերի 1-30-ը ընկած ժամանակահատվածում մասնակցեցի M4FCMA ակադեմիայի շրջանակներում կազմակերպված վարպետության դասերին: Վարպետության դաս ինձ համար անցկացրեց Ռուսաստանում և աշխարհում հայտնի ազգությամբ ռուս ֆլեյտահար Մաքսիմ Ռուբցովը: Նրանից ստացել եմ շատ արժեքավոր խորհուրդներ դասական երաժշտության կատարողական տեխնիկայի, մեղեդայնության, փողային գործիքին հատուկ նրբությունների վերաբերյալ: Ծանոթացա ավելի նեղ մասնագիտական գաղտնիքների: Դասը վարելիս՝ պ-ն Ռուբցովը նաև գործնականում էր /նվագելով/ ցույց տալիս վարժությունների, ստեղծագործությունների այս կամ այն հատվածների օրինակներ: Ապա ներկա գտնվեցի արտիստի համերգին:</p> <p>Լսել եմ նաև աշխարհահռչակ ջութակահար Գիլ Շահամի անցկացրած վարպետության դասը: Ներկա եմ եղել «Արմենիա» միջազգային փառատոնի շրջանակներում կազմակերպված բոլոր համերգներին: Գերագույն հաճությով ունկնդրել եմ ինչպես իմ կողմից շատ սիրված Հայաստանի պետական սիմֆոնիկ և Կամերային նվագախմբերի մեր երաժիշտներին, այնպես էլ բազմաթիվ օտարերկրյա, աշխարհում ճանաչում ունեցող երաժիշտներին:</p> <p>Այս 1 ամիսն ինձ համար շատ հագեցած էր, առանձնահատուկ իմ կյանքում, զարգացնող, հիշարժան: Ստացել եմ կարևոր փորձառություն, տեսական ու գործնական թանկ խորհուրդներ ու ավելի վստահ եմ, որ ընտրել եմ մասնագիտական ճիշտ ճանապարհ: Այս հնարավորությունը ունեցա Ջեր շնորհիվ, «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի հարգելի անդամներ: Ծարունակում եմ աշխատել ու պարապել շատ ավելի մեծ ոգևորությամբ ու եռանդով: Շնորհակալ եմ:</p>
2	Ալեքս Գրիգորյան	<p>Ես որպես մասնակից հանդես եմ եկել Դ. Յարլոնսկու և Ֆ. Կորոբովի վարպետության դասերին: Ինձ համար կարևոր էր այն, որ նրանք հանդիսանում են կատարողական արվեստի դասական դպրոցի ներկայացուցիչներ, որոնք լավ են պատկերացնում արդի ունկնդրի ճաշակն ու պահանջները: Քանի որ նրանք դիրիժոր են, հեշտորեն կարողացան ստեղծագործությունը նեղ մասնագիտական մեկնաբանումից գատ ներկայացնել ավելի լայնամասշտաբ՝ սիմֆոնիկ տեսանկյունից: Դասերը շատ հետաքրքիր և ճանաչողական էին, որը ևս 1 հնարավորություն ընձեռեց առերես շփվել մեծամեծ երաժիշտների հետ:</p>

		<p>Համերգները անցան ջերմ բարեկամական մթնոլորտում, ավելի մոտիկից ծանոթացա հիմնադրամի մյուս կրթաթոշակառուներին, ինչու չէ նաև կարողացանք որոշակի փորձի փոխանակում անել: Ծնորհակալություն «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամին:</p>
3	Նարեկ Հեքեքյան	<p>Շատ ոգևորված եմ, քանի որ ունեցա հնարավորություն՝ շփվել նման մասնագետների հետ: Ստացա նոր գիտելիքներ, որոնք, կարծում եմ, ամբողջ կյանքում ինձ պետք կգան: Թավջութակահարներից մեկը՝ Դ. Յարլոնսկին, նվիրեց իր կողմից մշակված Պոպպերի 40 էտյուդների ձեռնարկը, որով այժմ պարապում եմ:</p> <p>Ծնորհակալ եմ M4FF հիմնադրամին, նման հնարավորություն ընձեռելու համար:</p>
4	Լյանա Ուլիխանյան	<p>Տպավորություններս հաճելի են: Ծնորհակալ եմ պ-ն Ֆելիքս Կորոբովին վարպետության դասի համար: Ծնորհակալ եմ հիմնադրամի կազմակերպիչներին, տնօրենին և մասետրո Սերգեյ Սմբատյանին այս հնարավորության համար:</p>
5	Անի Մելիքյան	<p>Ես շատ օգտակար խորհուրդներ իմացա այս մի ամսվա ընթացքում: Տարբեր պրոֆեսորների հետ աշխատելով, լսելով բոլորի խորհուրդները: Դա ինձ հնարավորություն տվեց գտնել իմ ուրույն ձեռագիրը երաժշտության մեջ: Այս մեկ ամսվա ընթացքում ես մեծ աճ ունեցա: Ինձ շատ հաճելի էր գործ ունենալ մեծ պրոֆեսորների հետ: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր կազմակերպիչներին:</p>
6	Սվետլանա Հակոբյան	<p>Ցանկանում եմ մի քիչ հետ գնալ և սկսել այն պահից, երբ պարզվեց, որ ես ձեր հիանալի կազմի մասն եմ դարձել: Շատ անսպասելի էր և միևնույն ժամանակ՝ շատ հաճելի: Պետք է նշեմ, որ այս մեկ ամսվա ընթացքում հասցրեցի ձեռք բերել բազում նոր ընկերներ, որոնց հետ կխուսեմ եմ սերը դեպի իմ կյանքի գլխավոր հետաքրքրություններից մեկը՝ երաժշտությունը: Այս օրերի ընթացքում նաև նրանցից շատ բան սովորեցի: Վստահ եմ, որ դեռ շատ առիթներ կունենամ իրենցով հպարտանալու:</p> <p>Ակադեմիայի շրջանակներում անցկացված յուրաքանչյուր վարպետության դաս մեծ հնարավորություն էր շփվելու մեր ոլորտի լավագույն մասնագետների հետ և նրանցից շատ բան սովորելու:</p> <p>Պավել Գիլիովի վարպետության դասի ժամանակ ես ինձ համար նոր կատարողական տեխնիկա բացահայտեցի: Ժան-Պոլ Գասպարյանի դասընթացի ժամանակ նկատեցի որոշ տարբերություններ եվրոպական և ռուսական դպրոցների միջև, ինչն իսկապես շատ հետաքրքիր էր: Վլադիմիր Օվչիննիկովի հետ անցկացրած դասընթացը ամենատպալորիչն էր ինձ համար: Ինձ շատ դուր եկավ նրա դասը վարելու ոճը, մանկավարժական հմտությունները, նյութը շատ պատկերավոր ձևով բացատրելը, ինչպես նաև մարդկային բարձր արժեքները: Չեմ կարող չհիշատակել այն հոյակապ համերգները, որոնց ներկա գտնվեցի: Յուրաքանչյուր համերգ յուրահատուկ էր և կրկին սովորելու առիթ էր մեզ համար:</p> <p>Այս ակադեմիայի ընթացքում հնարավորություն ունեցա նաև ևս մեկ անգամ փորձել ինձ որպես հաղորդավար, ինչը ևս շատ հաճելի էր:</p> <p>Եվ վերջում, ուզում եմ շնորհակալություն հայտնել «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի տնօրինությանը և ամբողջ անձնակազմին ստեղծված բոլոր հնարավորությունների համար:</p>

7	Դավիթ Տոնոյան	<p>«Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կողմից կազմակերպված համերգներն ու վարպետության դասերն ինձ տվել են փորձ ու հմտություններ, ձեռք եմ բերել ինքնավստահություն: Վերջին համերգը ավելի հետաքրքիր էր, որովհետև մասնակիցների շրջանակը ավելի էր ընդլայնվել:</p> <p>Իմ բոլոր վարպետության դասերից տպավորված եմ, սկսել եմ նորովի մոտենալ գործիքիս: Վերջին վարպետության դասը շատ սպասված էր ինձ համար. Նիկոլայ Պողոսյանի հետ անցկացրած դասին մասնագիտական խորհուրդներ ստացա, սովորեցի նրբություններ ու վարժություններ, որոնք կիրառում եմ պարապմունքներիս ժամանակ և զգում եմ դրական փոփոխություններ:</p>
8	Էդուարդ Գևորգյան	<p>Հոկտեմբերի 1-30-ն ընկած ժամանակահատվածում հնարավորություն ստացա մասնակցելու 3 վարպետության դասի աշխարհահռչակ մասնագետների կողմից: Շատ տպավորված եմ բոլոր դասերից, շատ օգտակար էին բոլորի տված խորհուրդները, սակայն հատկապես կցանկանայի առանձնացնել Վ. Օվչինիկովի հետ ունեցած վարպետության դասը, քանի որ այն ինձ համար ամենատպավորիչն էր: Օվչինիկովի խորհուրդները Ռախմանինովի Պրեյուդի վերաբերյալ ինձ օգնեցին ավելի ճիշտ հասկանալ նյութը:</p> <p>Հիանալի էր նաև Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում ելույթ ունենալու հնարավորությունը: Այն ևս մեկ բեմական փորձ և մասնագիտական տեսանկյունից անի հնարավորություն տվեց բոլորիս: Շատ շնորհակալ եմ «Երաժշտություն հանուն ապագայի հիմնադրամին» այս ամենը հնարավոր դարձնելու համար:</p>
9	Օվսաննա Հարությունյան	<p>Հոկտեմբեր ամիսը «Երաժշտություն հանուն ապագայի» ակադեմիայի շնորհիվ դարձավ անչափ հետաքրքիր և բազմերանգ: Գրեթե ողջ ամսվա ընթացքում մենք ունեցանք վարպետության դասեր աշխարհահռչակ երաժիշտների հետ: Անչափ հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես են տարբեր երաժիշտներ աշխատում մեկ ստեղծագործության վրա, քանի որ նրանցից յուրաքանչյուրն իր յուրովի մոտեցումն ունի միևնույն ստեղծագործության կատարման վերաբերյալ: Ուսուցողական էր և ստեղծագործությունների կատարման կատարելագործմանն ուղղված այդ կայացած երաժիշտների հետ շփումը, նրանցից յուրաքանչյուրը մեզ հետ կիսվեց իր երաժշտական մոտեցումով և տեսակետով:</p>
10	Ալինա Ադամյան	<p>Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել, որ մեզ հնարավորություն ընձեռեցիք հանդիպել լեգենդար երաժիշտ-կատարողների և ուսուցիչների հետ և վարպետության դասեր ստանալ նրանցից: Անմոռանալի տպավորությունից բացի ստացա մեծ գիտելիքներ և երաժշտական հմտություններ, որոնք համոզված եմ, որ հետագայում ևս կուղեկցեն ինձ իմ երաժշտական զարգացման մեջ: Ուրախ եմ նաև, որ ունեցա հնարավորություն վայելելու մեծանուն երաժիշտների կատարումները: Հիմնադրամի շրջանակներում նաև ձեռք բերեցի նոր ընկերներ:</p>
11	Էդուարդ Չավոշյանց	<p>Ինձ շատ դուր են եկել բոլոր վարպետության դասերը՝ շատ տեղեկատվական էին և ինձ լրացուցիչ փորձագիտական խորհուրդներ տվեցին: Համերգը նույնպես շատ դուր եկավ, մթնոլորտը շատ ջերմ էր:</p>
12	Աիդա Ավանեսյան	<p>Ես շատ եմ սիրում վարպետության դասերը, քանզի այդ ժամանակ և սովորում ես, և կարողանում ես ցույց տալ քո աշխատանքը: Այս մեկ ամսվա ընթացքում ես մասնակցեցի վարպետության դասերի և շփում ունեցա շատ պրոֆեսիոնալ երաժիշտների հետ: Մենք շատ աշխատեցինք</p>

		<p>դինամիկ նշանների, շտրիխների և գույների վրա: Ես ձերք բերեցի վստահություն և համարձակություն:</p> <p>«Երաժշտություն հանուն ապագայի հիմնադրամ», անչափ շնորհակալ եմ այս հրաշալի նախաձեռնության համար:</p>
13	Դավիթ Բոյաջյան	<p>Անցած ամսվա ընթացքում՝ «Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիայի շրջանակներում մենք ունեցանք բազում վարպետության դասեր և համերգներ, և՛ որպես ունկնդրող, և՛ որպես կատարող:</p> <p>Ես վարպետության դասեր ունեցա Սերգեյ Դոգադինի, Գիլ Շահամի և Դորա Շվարցբերգի հետ, որոնց ժամանակ կարևոր խորհուրդներ ստացա երաժշտության արտահայտչականության, կատարողության, տեխնիկայի և այլ կարևոր բաների մասին: Նաև հաճախում էինք համերգների, որոնց հաճախելը մեծ հաճույք էր, քանի որ լսում էինք աշխարհահռչակ մենակատարների և լսելով նրանց՝ նաև կարևոր գիտելիքներ էինք վերցնում մեզ համար: Ակադեմիայի շրջանակներում ունեցանք նաև համերգներ մեր կողմից, որի վերջում՝ ես և կրթաթոշակառու Այա Անիսիմովան կատարեցինք Բախի՝ 2 ջութակի համար գրված կոնցերտը:</p> <p>Շատ շնորհակալ եմ «Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիայից այսպիսի հրաշալի ծրագրի համար, որի ընթացքում մենք բազում տպավորություններ ստացանք, կրթվեցինք, և պարզապես անմոռանալի հիշողությունների համար:</p>
14	Այա Անիսիմովա	<p>«Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիայի շրջանակներում հիմնադրամի բոլոր կրթաթոշակառուներս ունեցանք բազում վարպետության դասեր, որոնց մասնակից ենք եղել ոչ միայն մեր կատարմամբ, այլ նաև ունկնդրելով: Ունկնդրելով շատ դասեր՝ ես հնարավորինս վերցրել եմ շատ ու շատ օգտակար, կարևոր, անհրաժեշտ գիտելիքներ, որը կարծում եմ ցանկացած երաժշտի համար շատ կարևոր է: Ստանալով շատ գիտելիքներ՝ անչափ հաճելի է նաև պրոֆեսիոնալ, փորձառու արտիստների հետ անմիջական կապ հաստատել, և դա ինձ մոտ շատ արդյունավետ ստացվեց: Ունեցա վարպետության դաս՝ Գիլ Շահամի, Դորա Շվարցբերգի, Սերգեյ Դոգադինի հետ:</p> <p>Անսահման շնորհակալ եմ «Երաժշտություն ապագայի» մշակութային հիմնադրամին մեզ այսպիսի մեծ և կարևոր հնարավորություն ընձեռնելու, մեզ այսքան գիտելիքներ փոխանցելու, հիասքանչ համերգներին ներկա գտնվելու և անդադար կրթելու համար:</p>



**Հավելված 4**

**Արտերկրում վարպետության դասերի  
 ժամանակ պրոֆեսորների կողմից արված դիտարկումներ**  
 (03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

Աղյուսակ 8. MECMA-ի վարպետության դասերի պրոֆեսորների դիտարկումներ  
 (03.09.2021-24.09.2021, Դուբայ, ԱՄԷ)

N	Մասնակից	Գործիք	Պրոֆեսոր	Դիտարկումներ
1	Ասյա Անիսիմովա	ջութակ	Հայկ Կազազյան (Ռուսաստան/ Հայաստան)	1. Ավելի ինքնավստահ, ավելի ազատ լինել: 2. Պասսաժների (արագ մասեր) ժամանակ չխեղճանալ: 3. Մեծ աղեղ օգտագործել: 4. Երաժշտության տեմպը զգալ:
			Դանիել Հոփ (Մեծ Բրիտանիա)	1. Ստեղծագործությունը նվագել հանդիսատեսի համար, երաժշտությամբ տարվելիս չփոխել ուղղությունը՝ հակառակ հանդիսատեսին: 2. Մեծ աղեղ օգտագործել: 3. Իսպանական երաժշտության ոճին համապատասխան դետալներ օգտագործել:
			Սերգեյ Դոգադին (Ռուսաստան)	1. Вибрация-ն շատացնել: 2. Աղեղը զգալ: 3. Ջութակը պահել բարձր՝ ձայնի համար: 4. Պիանոների ժամանակ վստահ ցածր նվագել: 5. Բուն երաժշտական դետալներ:
			Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)	1. Ջութակ նվագելու համար արտասովոր բան պետք չէ անել, ամեն ինչ ինքնուրույն կստացվի: 2. Երաժշտությունը ճիշտ կատարելու համար մի քիչ մտածել է պետք: 3. Երաժշտականության առումով մի փոքր վստահ նվագել: 4. Տեխնիկայի համար պատրաստել վարժություն ու դրանով պարսպել:

2	Դավիթ Բոյաջյան		<p>Բորիս Կուշնիր (Ավստրիա)</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Չայնր լավ է արտահայտում:</li> <li>2. Փոքր դետալների փոփոխություն: Օրինակ՝ մատ-լար ճիշտ համադրություն, որն ավելի կհեշտացնի աշխատանքը: Ուշադրություն դարձնել դինամիկայի նշաններին (Forte, Crescendo, Diminuendo):</li> <li>3. Ամեն նոտա ունի իր вибрация-ի ձևը, ինչպես նկարիչն է տարբեր գույներ օգտագործում իր կտավի համար: Որոշ տեղերում ավելացնել Glissando-ներ:</li> <li>3. Չախ ձեռքի մատները նվագի ժամանակ չի կարելի դուրս պարզել:</li> <li>4. Գործիքը պետք է բարձր պահել (գրան-պրի, և այլն՝ ինչքան բարձր, այնքան լավ մրցանակ):</li> <li>5. Նոտակալը՝ հասակից բարձր:</li> <li>6. Աղեղի տարբեր մասերում որ մատն է գերիշխում (որ մատով պետք է սեղմել):</li> <li>7. Ուշադրություն դարձնել ակցենտների վրա:</li> </ol>
			<p>Գրաֆ Մուրժա (Հունգարիա/ Ռուսաստան)</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Եթե նվագախմբի հետ ելույթ լինի, ջութակի ձայնը չի լսվի, ուստի պետք է ձայնն ավելացնել, ուշադրություն դարձնել դինամիկայի նշաններին:</li> <li>2. Սովորեցրեց, թե ինչպես է պետք տանը ճիշտ պարապել (բաց լար նվագել առնվազն 5 բոպե ամեն լարի վրա. ցույց տվեց, թե ինչպես պետք է նվագել պասսաժները):</li> <li>3. Հետևել մատների դիրքին աղեղի վրա, որպեսզի ցուցամատը կեռիկ (крючок) չլինի:</li> <li>4. Աղեղի տարբեր մասերում որ մատն է գերիշխում (որ մատով պետք է սեղմել):</li> <li>5. Չայնր լավն է, ձեռքերը՝ ոչ այնքան:</li> <li>6. Ջութակ նվագելու համար արտասովոր բան պետք չէ անել, ամեն ինչ ինքնուրույն կստացվի:</li> </ol>

			Իգոր Պետրուշևսկի (Մեծ Բրիտանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ուշադրություն դարձնել ձայնի արտահայտչականությանը, նվագել ավելի վառ:</li> <li>2. Պետք է նվագել այնպես, որպեսզի հանդիսատեսի ուշադրությունը չկորցնել:</li> <li>3. Ուշադրություն դարձնել աղեղի շարժման վրա և ճիշտ օգտագործել այն:</li> <li>4. Պետք է գամմա և էտյուդ պարապել, քանի որ դրանք հիմք են հանդիսանում նվագի համար:</li> </ol>
3	Մարի Հակոբյան	Թավջութակ	Գմիտրի Յարբոնսկի (ԱՄՆ/Իսրայել/ Իսպանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Գամմա նվագելիս պետք է աղեղը շարժել շատ դանդաղ՝ լսելով նոտաները:</li> <li>2. Spiccato պարապելիս պետք է նվագել դանդաղ և դետաշե:</li> <li>3. Նվագելիս դնել 3 մատիտ մատների արանքում՝ վստահ լինելու համար, որ այդ ձեռքն ազատ է:</li> <li>4. Գրիֆին չբարձրանալ:</li> <li>5. Թեթև նվագելու համար պետք է նվագել աղեղի ծայրով:</li> <li>6. Ուշադիր լինել դետալներին/նյութաններին (պիանո, ֆորտե և այլն):</li> <li>7. Անցումների ժամանակ ազատել ձախ ձեռքը:</li> <li>8. Նվագել Բախի ամբողջ սյուիտան:</li> <li>9. Առաջարկել է Հայդնի ռե-մաժոր կոնցերտի 1-ին մասը նույնպես նվագել:</li> <li>10. Spiccato անելիս շարժել միայն մատները և ոչ թե ամբողջ ձեռքը:</li> </ol>

			Ալեքսանդր Ռամմ (Ռուսաստան)	<ol style="list-style-type: none"> <li>1. Spiccato անելիս շարժել միայն մատները և ոչ թե ամբողջ ձեռքը:</li> <li>2. Նոտաները չկտրել, աղեղով չանել կտրուկ շարժումներ:</li> <li>3. Չարագացնել:</li> <li>4. Ուշադիր լինել դետալներին/նյութաններին (պիանո, ֆորտե և այլն):</li> <li>5. Պետք չէ շատ արագ նվագել Բախի «Ժիգա»-ն:</li> <li>6. Ծորիխներ փոխել:</li> <li>7. Вибрация-ն պահել մինչև նոտայի վերջ:</li> <li>8. Նոտան չուռեցնել:</li> <li>9. Շատ տրուկ չնվագել շեշտով նոտաները:</li> <li>10. Ուշադիր լինել հաշվին, 16-րդականները չդարձնել մորդենտ:</li> <li>11. Երբ չգիտես ինչ նյութան անել, պետք է երգել նվագելուց առաջ:</li> </ol>
4	Տիգրան Գասպարյան	հորոյ	Պավել Օռլով (Ռուսաստան)	<ol style="list-style-type: none"> <li>1. Քիչ շարժվել:</li> <li>2. Երաժշտությունը նվագել ավելի մեղոդիկ (պիանո, ֆորտե):</li> <li>3. Ուսերը չլարել:</li> <li>4. Միշտ լինել կոնտակտի մեջ դաշնակահարի հետ:</li> <li>5. Արմունկներն ուղիղ պահել:</li> </ol>
			Լիոր Միշել (ԱՄՆ)	<ol style="list-style-type: none"> <li>1. Քիչ շարժվել</li> <li>2. Երաժշտությունը նվագել ավելի մեղոդիկ (պիանո, ֆորտե):</li> <li>3. Ծնչառության հետ կապված մի քանի ուղղում (հանգիստ շնչել, արտաշնչի ժամանակ ամբողջ օդը դուրս փչել):</li> <li>4. Գործիքը ուղիղ պահել:</li> <li>5. Արմունկներն ուղիղ պահել:</li> </ol>
5	Հայկ Հեքեքյան		Պավել Օռլով (Ռուսաստան)	<ol style="list-style-type: none"> <li>1. Լեզվակը/ծվանը (трость) քիչ դնել բերանի մեջ:</li> <li>2. Ֆրագայի մուտքից առաջ վերցնել շունչ երաժշտության բնույթին համապատասխան: Երաժշտության վերջավորությունը համապատասխանի երաժշտության բնույթին:</li> <li>3. Ունքերը բարձրացնելիս վերևի նոտաներն ավելի հեշտ է արտաբերել:</li> <li>4. Բուն երաժշտական դետալներ:</li> </ol>

			Լիոր Միշել (ԱՄՆ)	<p>1. Ավելի շատ լեզվակ օգտագործել:</p> <p>2. Օղի շիթի հավասարաչափ արտաբերում:</p> <p>3. Բուն երաժշտական դետալներ (Ֆրագայի նոր մեկնաբանություն, նոր մատների դիրքով 3-րդ օկտավայի Մի հնչյուն արտաբերել:)</p>
6	Դավիթ Տոնոյան	Ֆագոտ	Անդրեյ Շամիդանով (Ռուսաստան)	<p>1. Գործիքը լավը չէ, և քանի որ գործիքի փականներն ամբողջովին չեն փակվում, գործիքը լավ չի հնչում, դասախոսը քանդեց-հավաքեց գործիքը:</p> <p>2. Ընտրված ստեղծագործությունների փոխարեն ուրիշ ավելի հեշտ ռեպերտուար կառաջարկել:</p> <p>3. Լեզվակը չհավանեց, պետք է ավելի փափուկ լինի, ոչ թե հորոյի նման: Փագոտը նման է պապիկի, լեզվակը պետք է ավելի խուլ հնչի:</p> <p>4. Լեզվակը բերանի մեջ չպետք է ծուռ դրվի:</p> <p>5. Գործիքի պատյանը շատ ծանր է:</p> <p>7. Շատ թելադրություն գրել, լսել տարբեր ֆագոտահարների:</p>
		Ֆագոտ	Ռիչարդ Փալեյ (Իսրայել)	<p>1. Ծնչառական վարժություն է սովորեցրել. 2 գիրք կապել մեկը փորին, մեկը՝ մեջքին, և այնպես շնչել, որ փորին դրված գիրքը շարժվի:</p> <p>2. Եթե նվագում է օրինակ դոմաժորում կամ ռե-մինորում, դոմաժորի դո նոտան կամ ռե-մինորի ռե նոտան պիտի մաքուր հնչեն: Սա անելու համար օգտագործվել է հետևյալ մեթոդը. լեզվակը գրեթե ամբողջությամբ դնել բերանի մեջ և հնչեցնել նոտան: Դրանից հետո նվագել սովորական ձևով, ու արդյունքում հնչողությունը 2 ձևով նվագելու դեպքում էլ պիտի լինի նույնը:</p> <p>3. Նվագելիս մեղեդին պիտի չընդհատվի դադարների (пауза) ժամանակ, այլ ավելի շատ պետք է օգտագործվի շունչ քաշելու համար: Пауза-ն պետք չէ շատ կտրուկ կտրել մեղեդիից, այն պետք է դարձնել մեղեդիի մասնիկ:</p> <p>4. Երբ գործիքը լավ չի հնչում՝ մեջը ջուր լինելու պատճառով, պետք է փչել ձախ ձեռքի միջնամատի անցքի մեջ:</p> <p>5. 13 տարեկանի համար լավ է նվագում:</p>

				<p>6. Գործիքը լավը չէ:</p> <p>7. Որպեսզի նոտարները լավ հնչեն, պետք է շնչել փորով, ոչ թե կոկորդով: Օդը չպետք է մնա կոկորդում, այլ պետք է գնա որովայն:</p>
7	Սաթենիկ Գալստյան	գալարափող	Հագայի Շալոմ (Իսրայել)	<p>1. Աշխատել են Մենա Սանսի «Ռոմանա» ստեղծագործության շուրջ-սրան առնչվող՝ շնչառության հետ կապված՝ մի քանի տեղ ավելի ճիշտ շնչառության ձևեր կիրառել (լեզուն պետք է կպնի շրթունքի ներքևի հատվածին՝ նվազելն ավելի հեշտ դարձնելու համար): Պետք է կոկորդը հնարավորինս բացել, որ նվազելիս զգացվի, որ կոկորդի հատվածը բաց է, և նրա միջով օդ է դուրս գալիս և մտնում գործիքի մեջ:</p> <p>2. Պետք է միշտ կանգնել ձիգ, ուղիղ, ինչպես անում են երգիչները, և այնպես անել, որ մարմնին հարմար լինի:</p> <p>3. Բուն երաժշտական դետալներ</p>
		գալարափող	Վադիմ Շվեդիկով (Ռուսաստան)	<p>1. Աշխատել են Մոցարտ «Կոնցերտ N 1»-ի շուրջ - սրան առնչվող՝ Սովորեցրեց նոր շնչառական վարժություն, որի ժամանակ պետք է ամբողջ ուժով օդը վերցնել հատուկ չափով այնպես, որ բարձր ձայն գա, և շատ արագ արտաշնչել մի կետի վրա: Ցույց տվեց հատուկ փուչիկի միջոցով շնչառական այլ վարժություն, որն ամեն անգամ նվազելուց առաջ օգտագործելով՝ ավելի մաքուր կլինի և ձայնը, և շնչառությունը: Փուչիկը փչելիս ինչքան օդ փչում ենք մեջը, նույնքան էլ վերցնում ենք փուչիկից, ու վերցրած օդով նվազում:</p> <p>2. Շվանով սովորեցին նոր վարժություն, որի ժամանակ պետք է միայն շարժել ծնոտը՝ առանց շարժելու շրթունքները (բերանի ծայրերը չպետք է կողք գնան, հատկապես վերևի նոտաների վրա, այլ պետք է ծնոտն իջնի ներքև): Նաև այդ վարժությունը սկզբի համար պետք է անել առանց ծվանի, հետո փորձել միայն ծվանով, հետո էլ արդեն գործիքով:</p> <p>3. Մոցարտի առաջին կոնցերտում ավելացրեցին շունչը վերոնշյալ վարժությունների միջոցով (որպեսզի նվազելիս ավելի շատ շունչ ունենալ) : Նաև ասաց, որ պետք է ամբողջ</p>

				սենյակը լցնել գալարափողից դուրս եկած հագեցած և հստակ ձայնով: 4. Նշանակեց ուրիշ վարժություններ, որոնք կոչվում են harmonics և պետք է անել նվագելուց առաջ (գրել է, թե որ մաստներով պետք է նվագել վարժությունը և ինչ տոնայնություն կստացվի): Կարող է ուղարկել նոր և ավելի օգտակար վարժություններ՝ բարելավվելու շնչառությունը:
8	Միհրան Առաքելյան	շեփոր	Վլադիսլավ Լավրիկ (Ռուսաստան)	1. Երաժշտությունն ավելի գեղեցիկ կհնչի, եթե օգտագործվի ձայնի ավելի շատ երանգ: Ձայնի ավելի գեղեցիկ երանգ ստանալու համար պետք է ավելի շատ օդ: Օդը շատ վերցնելու համար ավելի ճիշտ կլինի ուղիղ կանգնել, ուսերը թողնել հանգիստ, իջեցնել ներքև: Վերցրած օդը պետք է փոխանցել գործիքին, իսկ գործիքն իր հերթին իրեն տված երաժշտական երանգը փոխանցում է հանդիսատեսին: 2. Առաջարկեց գործիքն ավելի բարձր և ոչ ստատիկ պահել:
		շեփոր	Անդրեյ Չդունյուկ (Ռուսաստան)	1. Խորհուրդ տվեց ավելի կտրուկ (կարճ) նվագել և բարձր (ֆորտե և ֆորտիսիմո): 2. Գործիքը լավը չէ: 3. Ստուգեց շնչառությունը վարժության միջոցով, և ասաց, որ շեփորահարի շնչառություն է:
9	Սամվել Դավթյան	տրոմբոն	Նաթանել Բիկով (Իսրայել)	1. Գործիքի դիսպոզիցիան ինչքան հնչունից որ բաղկացած է, նվագել բոլոր հնչյունները դեպի վեր՝ երկար պահելով: 2. Օդի շիթի հավասարաչափ անընդհատ արտաբերում: 3. Ստորին ծնոտը պետք է լինի ավելի առաջ, քան վերևինը: 4. Ուշադրություն դարձնել նաև նվագախմբային գործերին: 5. Սկզբից կուլիսի դիրքը (позация), հետո՝ լեզվի աստական:
		տրոմբոն	Վասիլի Կոզլով (Ռուսաստան)	1. Վերևի հնչյունները հեշտ նվագելու համար հավաքելով ձգել շրթունքի մկանները:

10	Գուր Սարգսյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/ Ավստրիա)	<p>«Հունգարական ռափսոդիա»</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լինել ավելի ուշադիր և նվագել այն, ինչ նշված է նոտաներում:</li> <li>2. Ուշադրություն դարձնել, թե ինչ տիպի երաժշտություն է գրել կոմպոզիտորը, և նվագել դրան համահունչ (օրինակ՝ հունգարական երաժշտություն՝ ավելի գնչուական է):</li> <li>3. Միսալ ռիթմով էր նվագում, պետք է շտկել:</li> <li>4. Որոշ հատվածներում ավելի հեշտ նվագելու ձևեր ցույց տվեց (օրինակ՝ աջ ձեռքի փոխարեն ձախով օգնել, օկտավաները նվագելիս պեղալի ճիշտ փոփոխում):</li> <li>5. Բուն երաժշտական դետալներ:</li> </ol>
		դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<p>«Լա Կամպանելլա»</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Խրոմատիկ հատվածներում կարելի է 4-րդ մատից օգտվել:</li> <li>2. Դինամիկաները ճիշտ նվագել (պիանո, ֆորտե, միտքը ինչպես սկսել, ինչպես ավարտել):</li> <li>3. Վարժություններ մատների բացվածքի համար, բայց ոչ շատ, որպեսզի չվնասել:</li> <li>4. Բուն երաժշտական դետալներ «Պրելյուդ N7»</li> </ol> <p>1. Բուն երաժշտական դետալներ «Պրելյուդ N6»</p> <p>1. Լավ նվագելու համար պետք է առաջնահերթ լսել՝ ինչ ես նվագում: Առաջարկել է վարժություններ (օրինակ՝ Crescendo-ն 1 մատով նվագել, գամմա նվագել՝ պիանո, ֆորտե, մեցոֆորտե և այլն ճիշտ նվագելու համար):</p>
		դաշնամուր	Ստեփան Միմոնյան (Գերմանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ուղղեց պեղալները:</li> <li>2. Բացատրեց օբերտոն, "Хорошо темперированный клавир" արտահայտությունները:</li> <li>3. Ասաց պատկերացնել, որ ձախ ձեռքը կարծես թավջութակ է նվագում՝ մեղեդին ճիշտ լինելու համար:</li> <li>4. Մի տեղ ուղղեց նոտաներ:</li> <li>5. Բացատրեց Ռախմանինովի խարակտերիստիկան:</li> </ol>



11	Գառնիկ Մարյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/ Ավստրիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Շուրերտ պետք է նվագել ավելի Շոպենի նման, քան Բախի: Այսինքն՝ ավելի մեղմ:</li> <li>2. Պեդալը ճիշտ ժամանակին փոխել:</li> <li>3. Առաջին դանդաղ մասը երբ սկսվում է, C#-ը ճիշտ պետք է նվագել (ոչ Re#):</li> <li>4. Ամբողջ երաժշտությունը նույն ձայնի մեջ է նվագում, ուշադրություն դարձնել դինամիկայի նշաններին:</li> <li>5. Բուն երաժշտական դետալներ:</li> </ol>
		դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Դաստակը պահել այնպես, որ միայն շարժվեն մատները, և ոչ թե թողնել դաստակը ազատ:</li> <li>2. Կատարման դանդաղ մասերը ավելի մեկտրիկ լինեն:</li> <li>3. Մեջքը ուղիղ պահել:</li> <li>4. Վարժություն՝ մեցոմեցոպիանո, մեցոպիանո, պիանո, մեցոֆորտե, ֆորտե:</li> <li>5. Պեդալի մասը լավ է:</li> <li>6. Բուն երաժշտական դետալներ</li> </ol>
		դաշնամուր	Ստեփան Միմոնյան (Գերմանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ուղղեց պեդալները:</li> <li>2. Բացատրեց օբերտոն արտահասպտությունն ինչ է նշանակում:</li> <li>3. Ասաց պատկերացնել, որ ձախ ձեռքը կարծես ջութակ է նվագում, որպեսզի ավելի շատ ձախ ձեռքով նվագվող գործեր կատարի, քանի որ աջ ձեռքը լավ է զարգացած:</li> <li>4. Պետք է հավասարեցնել պրեյլուդը:</li> <li>5. Ֆուգայում ձայները առանձին-առանձին պարապել, որպեսզի նյութն ավելի լավ ստացվի:</li> <li>6. Շուրերտի «Էքսպրոմպտ»-պետք է նյութն ավելի երաժշտական պատկերացնել: Ուղղեց մի քանի նոտա:</li> <li>7. Ուշադրություն դարձնել դինամիկայի նշաններին:</li> <li>8. Տանը պարապել դանդաղ, որ ավելի լավ ստացվի:</li> </ol>

12	Աստղիկ Ղուկասյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ավելի լավ պատկերացնել ստեղծագործության կերպարները և փորձել ավելի հետաքրքիր և հարուստ դարձնել այդ ստեղծագործությունը:</li> <li>2. Խուսափել սուբիտոներից (միանգամից անցում ֆորտե կամ պիանո):</li> <li>3. Օգտագործել ավելի շատ դաստակից արմունկ ընկած հատված և նվագել մատ ու դաստակով:</li> </ol>
		դաշնամուր	Ստեփան Միմոնյան (Գերմանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ռուբատոն (ազատ նվագելը) լինի չափի մեջ:</li> <li>2. Օգտագործել ավելի շատ դաստակից արմունկ ընկած հատվածը:</li> <li>3. Ֆորտեի զարգացումը շատ արագ է լինում, պետք է դանդաղեցնել:</li> </ol>
13	Արիանա Կարապետյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Չգացնունքերը համադրելով երաժշտության հետ՝ ստանալ ամբողջական ստեղծագործություն:</li> <li>2. Յուրաքննաչուր երաժշտական թեմայի զարգացումը ցույց տալ յուրովի:</li> <li>3. Տարբերել առաջնային և երկրորդային ձայները:</li> <li>4. Ավելի արտահայտիչ ներկայացնել երաժշտական դինամիկան:</li> <li>5. Նվագել այնպես, ինչպես կերգեր:</li> </ol>
		դաշնամուր	Ստեփան Միմոնյան (Գերմանիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ճիշտ պատկերացնել երաժշտական ֆրազան և միմյանց կապել դրանք:</li> <li>2. Ուղղորդվել երաժշտությամբ, քանի որ լինում են տեխնիկական բարդություններ, որոնք կարգավորվում են հենց երաժշտականության միջոցով:</li> <li>3. Նվագելուց առաջ ուսումնասիրել ստեղծագործության նախապատմությունը:</li> </ol>
14	Մարի Փոշոտյան	դաշնամուր	Պավել Գիլիով (Գերմանիա/ Ավստրիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ուշադրություն դարձնել ձեռքի կառուցվածքին՝ պատկերացնելով ձեռքը որպես վոկալի շարունակություն:</li> <li>2. Ճիշտ կառավարել ձեռքի քաշը, մեղեդին նվագել ավելի երգային և սահուն:</li> <li>3. Ապալիկատուրային որոշ ուղղումներ:</li> </ol>
		դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<ol style="list-style-type: none"> <li>1. Ստեղծագործություններում ուղղորդվել աջ ձեռքով, որպեսզի մեղեդին ավելի սահուն լինի:</li> <li>2. Բուն երաժշտական և կատարողական դետալներ:</li> </ol>

				<p>3. Որոշ ֆրագաներ հաղթահարելու համար ցուցադրվել են վարժություններ: Օրինակ՝ նվազել ինտերվալներով, երկար ֆրագաները սահուն կատարելու համար նվազել ակորդներով, փորձել ֆրագայի մեջ գտնել մի քանի գլխավոր նոտա, հետևել ձայնի աստիճանաբար տատանմանը՝ նմանեցնելով սրտի աշխատանքին:</p> <p>4. Առաջարկ իր ակադեմիայում սովորելու համար:</p>
15	Մարգարիտա Միքսելյան	դաշնամուր	Ջուլիանո Մացոկանտե (Իտալիա)	<p>1. Ձայները նմանեցնել տարբեր երաժշտական գործիքների՝ նոր գույներ ստանալու համար:</p> <p>2. Ծանոթացրեց հետաքրքիր և տարբերվող վարժությունների հետ, որոնք ավելի պատկերավոր են դարձնում ուսումնառության գործընթացը:</p> <p>3. Երաժշտական տերմինոլոգիայի նոր տարբերվող ձևով բնութագրում (օրինակ՝ մեսոտ, ինաֆերանդո, կոնգրացիա):</p> <p>4. Բուն երաժշտական և կատարողական դետալներ:</p>
		դաշնամուր	Ստեփան Միմոնյան (Չեռմանիա)	<p>1. Բացատրեց պարապելու արվեստը, օրինակ՝ գտնել քեզ համար հարմար ձայնի որակ տվյալ հատվածում կամ բացահայտել տեխնիկական բարդության պատճառը:</p> <p>2. Տարբերել առաջնային և երկրորդային ձայները:</p> <p>3. Ժամանակին ճիշտ տիրապետելու հմտություններ (ռուբատո):</p> <p>4. Բուն երաժշտական և կատարողական դետալներ:</p>

16	Վալերի Պոլոյան	դաշնամուր	Ստեփան Սիմոնյան (Գերմանիա)	<p>1. Ձեռքի ճիշտ դիրք, կեցվածք, ձեռքի ճկունության աշխատանքներ, տեխնիկական շտկումներ և վարժություններ, մատները կլոր նվազել:</p> <p>2. Ծանոթացրել է կոմպոզիտորի խառնվածքին և ստեղծագործության բնույթին՝ ստեղծագործությունն ավելի ճիշտ պատկերացնելու համար:</p> <p>3. Նվազեցին տարբեր տոնայնությունների մեջ գամմաներ:</p> <p>4. Հավասար նվազել:</p> <p>5. Պեդալի՝ նոտաների մեջ չնշված մասերը լսողությամբ կարգավորել, ինչպես հարմար է, բայց որպեսզի մաքուր հնչի:</p> <p>6. Նվազել ակորդներ, քանի որ ձեռքը փոքր է:</p> <p>7. Բուն երաժշտական և կատարողական դետալներ:</p>
----	-------------------	-----------	----------------------------------	---